ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/12

ք. Սպիտակ « 01 » հուլիսի 2021թ.

Սպիտակ համայնքը, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ք. Նիկողոսյանի (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԷՄ-ԷՅ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Մելքոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված քաղաքացիների սպասարկման գրասենյայի վերակառուցման և վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 15.08.2021թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետում նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3.4.13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6 487 740 (վեց միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամ, որից 1 081 290 (մեկ միլիոն ութսունմեկ հազար երկու հարյուր իննսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու

հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 21 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Սպիտակ համայնք	«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 7	ք. Սպիտակ, Շահումյան 10
ՀՎՀՀ՝ 06801433	ՀՎՀՀ՝ 06959372
Հ/Հ՝ 900242191022	Հ/Հ՝16032022852300
ՀՀ ֆին նախ գործառն վարչ	«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Համայնքի ղեկավարի	Տնօրեն՝ Մ. Մելքոնյան
պաշտոնակատար՝ Ք. Նիկողոսյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված թիվ 1
« 01 » հուլիսի 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/12 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք. Սպիտակ, Շահումյան 7 հասցեում:

NN	Աշխատանքների անվանումը	չ/ա	ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	<u>Շինարարական աշխատանքներ</u>				
	<u>ՔԱՆԴՈՒՄ ԵՎ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՄ</u>				
1	Մոտ 200 մմ հաստության միջնորմների քանդում /33մ²/	մ³	6,6	5,94	39,23
2	(800-850)x2070 մմ չափերով փայտե դռների ապամոնտաժում 3 հատ/	մ²	5,12	0,89	4,56
3	Բոլոր չգործող բաց մալուխների ապամոնտաժում	գմ	100	0,08	7,70
4	Ցեռուցման խողովակների և կցամասերի ապամոնտաժում	գմ	36	0,34	12,29
5	Բոլոր էլեկտրական վարդակների, անջատիչների, բաժանարար տուփերի, լուսատուների ապամոնտաժում	հատ	32	0,07	2,38
6	Միջնորմների քանդումից հետո ՔՍԳ-ի ներսի կողմից ներքին կրող երկայնական և լայնական (միջանցքի) պատերի ամբողջ մակերևույթից և արտաքին պատերի բոլոր շեպույթներից հարդարարական շերտերի (գաջ, մոտ 3-6 սմ) ամբողջական քանդում	մ²	83	0,58	48,06
7	Բոլոր շրջիչների ապամոնտաժում	գմ	68,8	0,01	0,60
8	Հատակի ց/ա հարթեցնող շերտի քանդում 3,5-5 սմ խորությամբ, խողովակների և մալուխների մոնտաժման համար	մ²	7,2	0,40	2,87
9	Հատակի փայտե մանրահատակի քանդում	մ²	69,7	0,41	28,64
10	Կրող պատի մեջ դռան բացվածքի քանդում, չափերի մեծացման համար	մ³	1,7	15,84	26,93
11	Ներքին երկայնական կրող քարե պատի մեջ 410(Բ)x390(L)x170(Խ) մմ չափերով 2 խորշերի բացում՝ ներկառուցվող էլեկտրական և անվտանգության վահանակների (չափը՝ 390(Բ)x340(L)x120(Խ)) տեղադրման համար	մ³	0,054	14,77	0,80
12	4 ՊՎՔ լուսամուտագոգերի ապամոնտաժում	գմ	5,8	0,25	1,46
13	Շին. աղբի հավաքում, բարձում եւ տեղափոխում 3կմ	տ	9,5	1,11	10,56

	ՊԱՏԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ				
1	3 դռան փակում կանոնավոր տուֆե բլոկներից շարվածքով, կրող պատի մեջ	մ³	2,53	15,91	40,25
2	Միակողմանի ԳԿԹ (T=12 մմ) պատի կառուցում: Գլխավոր ուղղաձիգ ստադը (W=50 մմ) ձգվում է պատին, գետնից բարձր (շրջիշակի հետևում մոնտաժվող սակառի չափով) և հասնում մինչև առաստաղ	մ²	71	3,71	263,59
3	Լուսամուտաբացվածքների շեպույթների և ջեռուցիչների խորշերի կառուցում միակողմանի ԳԿԹ-ով (T=12 մմ) առանց ստադերի ԳԿԹ-ն պատին ձգվում է հատուկ պլաստիկ դյուբելներով, կոշտ ջերմամեկուսիչ թերթասալերի վրայից	մ²	20	3,71	74,25
4	Ջերմամեկուսիչ հանքային բամբակի (T=50 մմ) ձգում արտաքին պատերին հատուկ պլաստիկ դյուբելներով Նշում՝ ապակե բամբակով փոխարինումը անընդունելի է	մ²	54	1,24	67,12
5	Լուսամուտաբացվածքների բոլոր շեպույթների և պատերում բոլոր ջեռուցիչների խորշերի մեջ արտաքին պատի ջերմամեկուսացում արտամղված փրփրապոլիստերոլե թերթասալերով (T=30 մմ)	մ²	20	1,29	25,76
	ԲԱՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ				
1	Ակոսների բացում պատերում մետաղակառուցվածքների տեղադրման համար	գմ	4	0,74	2,94
2	Անցքերի շաղափում պատերում ∅15մմ, L=200մմ	հատ	15	0,17	2,62
3	Անցքերի շաղափում պատերում ∅18մմ, L=520մմ	հատ	4	0,44	1,77
4	Անցքերի շաղափում մետաղական տարրերում	հատ	19	0,04	0,72
5	Ուժեղացման մետաղական տարրերի տեղադրում	տ	0,274	114,57	31,39
6	Ամրան ∅12A500C	տ	0,003	379,94	1,14
7	Թերթապողպատ —6մմ	տ	0,032	513,51	16,43
8	Մետաղական անկյունակ L100x10մմ	տ	0,152	452,65	68,80
9	Մետաղական անկյունակ L75x6մմ	տ	0,015	465,66	6,98
10	Ուղղանկյուն կտրվածքի խողովակ □70x50x4մմ	տ	0,016	503,65	8,06
11	Եվելեր N16n	տ	0,0555	484,38	26,88
12	Մետաղական տարրերի պաշտպանիչ սվաղի իրականացում 30մմ	մ²	6,35	2,10	11,73

13	Մետաղական տարրերի պաշտպանիչ սվաղի իրականացում 50մմ հաստությամբ, մետաղական ցանցի վրա	մ²	3,67	2,69	9,86
14	Մետաղական ցանց	մ²	9,02	0,54	4,85
15	Հեղույսներ M16x1.5. L=520մմ - 4 հատ	կգ	3.5	1,05	3,68
16	Մետաղական տարրերի ներկում հակակոռոզիոն ներկով, կեղտից եւ ժանգից մաքրելով	տ	0,274	13,74	3,77
	<u>ԱՌԱՍՏԱՂՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ</u>				
1	Հեծանների ԳԿԹ (T=12 մմ) երեսապատում: Հեծանների ճակատները երեսապատվում են սյուների լայնությանը հավասար, հետևում տեղադրելով ստադ, իսկ ստորին նիստերի ԳԿԹ-ները տեղադրվում են առանց ստադերի, ե/բ հեծանին կիպ	մ²	15	3,93	58,97
2	Առաստաղի ԳԿԹ ակուստիկ պանելներ: Մեկ պանելի չափը՝ 1190x2000x12.5 մմ, 12x12 մմ չափի քառակուսի կանոնավոր անցքերով: Արտադրողը՝ Knauf կամ տեխնիկապես համարժեք: Ներառյալ ամրացման դետալները և թերթասալերի եզրերի վերջնամշակման աքսեսուարները:	28/27 ցինկապատ մոնտաժային ուղորդիչ պրոֆիլի ստորին նիստը ներկել առաստաղի գույնի: Պանելների ընդհանուր քանակը 30 հատ	մ²	78,54	7,29	572,34
	<u>ՀԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՍԱԼԱՊԱՏՈՒՄ</u>				
1	Կերամագրանիտե սալիկներով հատակի սալապատում: Չափը՝ 200x800x11 մմ, տեխնիկական բնութագիրը ըստ՝ Marazzi SG701700R (կամ տեխնիկապես համարժեք)	մ²	73,6	7,36	541,59
2	Սալիկի ջրակայուն սոսինձ 9 մմ 70մ²	կգ	734	0.15	113.76
3	Ինքնահարթեցվող լցնովի հատակ, 10 մմ (ցեմենտային հիմքով)	մ²	70	2,34	163,93
4	Խողովակների և մալուխների համար հատակի քանդված հատվածների ց/ա հարթեցնող շերտի վերականգնում T=30-50 մմ	մ²	7,2	1,20	8,66
	<u>ՁԵՌՈՒՑԻՉՆԵՐԻ ԽՈՐՇԵՐ, ՇՐԻՇԱԿՆԵՐ ԵՎ ՄԱԼՈՒԽԱՏԱՐ ՍԱԿԱՌՆԵՐ</u>				
1	50(Խ)x95(Բ) մմ ակոսների պատրաստում պատերի մեջ ներկառուցվող պլաստիկ սակառների տեղադրման համար	գմ	15	0,43	6,40
2	Ցինկապատ հարդարարական անկյունակ L20 մմ: Տեղադրվում է սակառների ակոսների վերին եզրագծով, պատի սվաղի տակ	գմ	18	0,45	8,11
3	MDF շրիշակ, չափը՝ 80x15 մմ, գույնը՝ սպիտակ: Պրոֆիլը ըստ նախագծի	գմ	44	0,84	37,16
4	Պատի մեջ ներկառուցված պլաստիկ սակառ 60x40 մմ, պլաստիկ կափարիչով	գմ	42	0.65	27.39
	40 հատ 50(W)x20(H)x200(L) մմ չափի փայտե չորսուի տրկծում հատակին,	[illegible]	[illegible]	[illegible]	[illegible]

6	40 հատ 20(W)x20(H)x200(L) մմ չափի փայտե չորսուի սոսնձում հատակին. քայլը 600մմ. Տեղադրվում է սակառի մեջ	գմ	14	0.16	2,27
7	Ալեկաբոնդե թերթասալ. Չափը՝ մոտ 980x410 մմ, 4 հատ, եզրերը հղկված մշակված, սպիտակ գույնի, տեղադրվում է ջեռուցիչների հետևում, պատի վրա, ջեռուցիչի գաբարիտից բոլոր կողմերից 7 սմ ներս	մ²	1,61	11,61	18,70
	<u>ԼՈՒՍԱՄՈՒՏԱԳՈԳԵՐ</u>				
	Ներքին				
1	Լուսամուտագոգերի տակ հարթեցման շերտի պատրաստում ցեմենտ-ավազե սվաղով կամ սալիկի սոսնձով կամ ինքնահարթեցվող լցնովի հատակով (ցեմենտային հիմքով). հաստությունը մոտ 10 մմ	մ²	2,749	1,09	2,99
2	4 հատ Մնիի ֆելզիտային դեղնավուն տուֆե սալ. Չափը՝ մոտ (1416-1456)x(432-472)x30 մմ. Ճակատային կողմից վերին և ստորին երկայնական եզրագծերը լծորդված 2 մմ շառավղով, հղկված, մշակված. Տեղադրվում է պատի և շեպույթների հարթության հետ հավասար	մ²	2,749	7,13	19,59
3	Ալյումինե անկյունակ L10 մմ. Տեղադրվում է լուսամուտագոգի տակից, ակոսի մեջ՝ ըստ գծագրի	գմ	6	0,28	1,68
	<u>ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՈՒՄ</u>				
1	150 մմ լայնքով ակոսների բացում՝ դեպի վարդակներ մալուխների անցկացման համար	գմ	1,5	0,74	1,10
2	60 մմ լայնքով ակոսների բացում՝ դեպի վարդակներ մալուխների անցկացման համար	գմ	13	0,43	5,55
3	Առաստաղի (ներառյալ հեծանները) բոլոր տեսակի ԳԿԹ-ների կարերը. պտուտակների տեղերը. եզրային և մնասված հատվածների ծեփամածկում, ամբողջ մակերեսով ներկում (երկու շերտ) լատեքսային ներկով (ներկի գրունտի վրայից), բարելավված որակի, առանց ծեփամածկման (բացի պտուտակներով ձգման կետերից). գույնը՝ ըստ նախագծի	մ²	93,54	0,99	92,95
4	Պատերի գիպսոնիտե սվաղում (շաղախը՝ 70% գիպսոնիտ՝ 30% գիպս). ներառյալ շեպույթները. ՔՍԳ և միջանցք (մասնակի)	մ²	70	1,91	133,65
5	Պատերի հարդարարական շերտի հղկում-հարթեցում, նոր գրունտի շերտի պատրաստում. ներառյալ շեպույթները. ՔՍԳ և միջանցք (մասնակի)	մ²	161	0,28	44,70
6	Պատերի ներկում (երկու շերտ) լատեքսային ներկով (ներկի գրունտի վրայից). բարելավված որակի. ծեփամածկումով, սպունգով լվացվող. գույները ըստ նախագծի. ներառյալ շեպույթները. ՔՍԳ և միջանցք (մասնակի)	մ²	161	0,90	144,20
	<u>ՕԴԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ</u>				
1	∅210 մմ-ոց անցքի շաղափում մոտ 600 մմ հաստությամբ արտաքին պատերի մեջ. ինչպես նաև ԳԿԹ պատի մեջ	հատ	1	3,38	3,38
2	∅110 մմ-ոց անցքերի շաղափում մոտ 600 մմ հաստությամբ արտաքին պատերի մեջ՝ օդի ներածման համար	հատ	4	3,38	13,53

3	Պոլիպրոպիլենե օդատար հարթ խողովակի տեղադրում, ∅200 մմ	գմ	1	4.50	4.50
4	Պոլիպրոպիլենե օդատար հարթ խողովակի տեղադրում, ∅100 մմ	գմ	2	1.71	3.42
5	∅100 մմ խողովակի համար մետաղական ցանց	հատ	4	2.48	9.90
6	∅100 մմ խողովակի համար մետաղական/պլաստիկ ճաղաշար/ցանց, մեջը տեղադրված հակամիջատային ցանց պատի արտաքին կողմից, ներկված մոխրագույն կամ պատի գույնի	հատ	4	2.59	10.35
7	Անաղմուկ դասի ≥23 դԲ, առանցքային օդամուղ, ∅200 մմ խողովակի համար, ավտոմատ կարգավորվող շերտավարագույրով (սպիտակ գույնի). Տեղադրվում է պատի մեջ, արտաքին պատի ներսի կողմից	հատ	1	15.83	15.83
8	∅200 օդանցքի շերտավարագույր, պլաստիկ կամ մետաղական, ներկված մոխրագույն կամ պատի գույնի	հատ	1	3.04	3.04
9	Անցքերիի և խողովակի միջև արանքի (5 մմ) հերմետիզացում սիլիկոնով կամ ջերմամեկուսից փրփուրով	հատ	5	0.01	0.05
	<u>ԱՐԵՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ</u>				
1	Գալարավարագույրներ (ներառյալ մեխանիզմները), 4 հատ: Կտորի գույնը RAL 7035 կամ RAL 7044: Կտորի նմուշը համաձայնեցնել ճարտարապետի հետ: Տեղադրվում է լուսամուտի բացվածքից դուրս, պատի ներսի մակերևույթի վրա ըստ գծագրի	մ²	15	8.17	122.54
	<u>Համակարգչային ցանցի մուտքի և հատակի մեջ ուղիների կազմակերպում</u>				
1	∅40 մմ անցքի շաղափում մոտ 500 մմ հաստությամբ քարե պատի մեջ	հատ	1	0.40	0.40
2	ՊՎՔ խողովակ, ∅30 մմ	գմ	12	0.48	5.81
3	ՊՎՔ անկյունակ, ∅30 մմ	հատ	14	0.33	4.66
	<u>ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ</u>				
1	Օրգանական ապակուց ցուցատեղկերի և արկղերի ամրացում պատերին	հատ	6	0.63	3.79
2	Թվանշանների պատրաստում և տեղադրում: Նյութը՝ նրբատախտակ, T=12 մմ: Բոլոր նիստերը և եզրերը հղկված մշակված: Մակերևույթների վերջնամշակումը՝ անգույն, թափանցիկ լաքով: Այլ մանրամասները ըստ նախագծի: Տեղադրվում է պատից 2 սմ հեռավորության վրա, ներառյալ մոնտաժային դետալները՝ մետաղական խողովակ, պտուտակ, դյուբել	հատ	6	13.06	78.36
	<u>2/ Դուռ, լուսամուտներ</u>				

	Հակամիջատային ցանցեր. ծխնիներով. Լուսամուտի փեղկի նույն գույնով և տեքստուրայով (ապիտակ). Յուրաքանչյուր լուսամուտի համար տեղադրվում է միայն մեկ բացվող փեղկի համար, արտաքին կողմից				
2	Լուսամուտների ապակեփաթեթների փոխարինում Նոր ապակեփաթեթների տեխնիկական բնութագիրը՝ երկշերտ, 6մմ հաստությամբ ապակիներով, բոլոր ապակիները կոփած Ընդամենը 3 ուղղանկյուն լուսամուտների համար. Յուրաքանչյուր լուսամուտի մեջ առկա է երկու անշարժ և մեկ շարժական սեգմենտ	մ²	10.85	15.51	168.28
3	1090x2415 մմ չափերով դուռ-լուսամուտ. ETEM E1000 (կամ տեխնիկապես համարժեք) պրոֆիլով (միայն պարագծով), առանց ջերմակամրջակի. Ֆայլը՝ ուղիղ, շրջանակի գույնը/տեքստուրան՝ RAL 8022 (էլեկտրոլիզով ներկված) փայլատ և փշոտ. ապակիները՝ միաշերտ 12 մմ հաստությամբ և կոփած. Այլ մանրամասները տես ստորև և նախագծում	մ²	2.63	29.25	76.93
4	**Այդ թվում աքսեսուարներ՝** 1. Դռան բռնակներ՝ 35-40 մմ տրամագծով խողովակ, երկարությունը՝ 1000 մմ Նյութը՝ չժանգոտող պողպատ: Գույնը՝ RAL 8022 (փոշեներկված էլեկտրաստատիկ դաշտում), փայլատ Տեղադրվում է դռան երկու կողմից: 2. Հատակային չափաբերիչ. Արտադրող՝ Dorma կամ GU (կամ տեխնիկապես համարժեք), գույնը՝ սև կամ չժանգոտող պողպատ 3. Բարձրորակ դռան փական (բանալիներով), գույնը՝ սչ կամ չժանգոտող պողպատ 4. Դռան սահմանափակիչ (հատակին տեղադրվող), նյութը՝ չժանգոտող պողպատ, թափանցիկ ռետինե օղակով 5. Դռան վրա փակցվող ինքնակպչուն պոլիմերային թաղանթ (օռակալ)՝ ըստ նախագծով առաջադրված սկզբունքի, տեսակի և գույնի	կ-տ	1	163.26	163.26
	3 էլեկտրատեխնիկական աշխատանքներ				
1	1 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	13	0.07	0.91
2	2 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	3	0.16	0.47
3	3 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	4	0.23	0.93
4	4 տեղանոց վարդակի/անջատիչի տուփ, ներկառուցվող	հատ	3	0.28	0.84
5	1 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	13	0.16	2.03
6	2 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	3	0.27	0.82
7	3 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	4	0.51	2.02
8	4 տեղանոց վարդակի/անջատիչի շրջանակ	հատ	3	0.93	2.80
9	Էլեկտրական ներկառուցվող վարդակ, տիպ F, CEE 7/3 (Schuko) 16 Ա, 250 Վ, երկբևեռային հողանցումով. Legrand Niloe/Etika կամ տեխնիկապես համարժեք	հատ	19	0.96	18.17
10		հատ	2	1.90	3.79

	1 տեղանոց RJ-45 տիպի, cat. 5 կամ 6՝ համակարգչային ցանցի վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող), Legrand Niloe/Etika կամ տեխնիկապես համարժեք				
11	2 տեղանոց RJ-45 տիպի, cat. 5 կամ 6՝ համակարգչային ցանցի վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող), Legrand Niloe/Etika կամ տեխնիկապես համարժեք	հատ	5	3,38	16,88
12	Էլեկտրական վերադիր վարդակ, տիպ F, CEE 7/3 (Schuko) 16 Ա, 250 Վ, երկբևեռային հողանցումով	հատ	9	1,04	9,38
13	2 տեղանոց RJ-45 տիպի, cat. 5՝ համակարգչային ցանցի վերադիր վարդակ	հատ	4	4,15	16,62
14	RJ-45 + RJ-11 տիպի (համակարգչային ցանց + հեռախոս) վերադիր վարդակ, տեղադրվում է էլ. վարդակ/անջատիչների շրջանակի մեջ (պատի մեջ ներկառուցվող)	հատ	2	4,15	8,31
15	Անջատիչ մեկ ստեղնով	հատ	3	0,80	2,40
16	Անջատիչ երկու ստեղնով	հատ	2	1,42	2,85
17	Գործարանային արտադրության բարձրորակ երկարացման լար, 4-5 էլ. վարդակով (տիպ F, CEE 7/3 (Schuko), 16 Ա, 250 Վ, երկբևեռային հողանցումով) համար, մալուխի երկարությունը՝ 2 մ, Հոսանքի ֆիլտրով, Վարդակները, կարպուսը և մալուխը սև գույնի, APC կամ տեխնիկապես համարժեք	հատ	1	4,67	4,67
18	Մետաղական (պողպատ, ալյումին) դետալ D.15.2, հատակից դուրս եկող մալուխների ուղղորդման և պաշտպանման համար, Հատակին ձգվող սկավառակի տրամագիծը՝ 83 մմ, անցքի տրամագիծը՝ 30 մմ, երկարությունը՝ 300 մմ, Գույնը՝ RAL 1015 (փոշեներկել էլեկտրաստատիկ դաշտում), Ներառյալ հատակին ամրացման դետալները (3 հատ), Մանրամասն տեխ. բնութագիրը տես նախագծում	հատ	3	2,19	6,57
19	Էլեկտրական բաշխիչ վերադիր վահանակ, տեսակը՝ ԱՊԲ-18 IP31 EKF PROxima, 18 մոդուլի համար, նյութը՝ մետաղ, չափը՝ 390(Բ)x340(Լ)x120(Խ) մմ, վաճառքային գույնը՝ RAL 7035, Ներկել այն պատի գույնով, որի մեջ տեղադրվելու է, ՊԷՊ-ի բոլոր նորմատիվ պահանջներին համապատասխան, էլեկտրաանվտանգության բարձր դասի, կոմպլեկտավորված մակնիշավորման պիտակներով	հատ	1	13,34	13,34
20	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, եռաբևեռ, 100 A, 220Վ DX³ 10000 3P, C100A Եվրոպական ստանդարտի, բրենդային (Legrand, ABB, Gewiss կամ այլ տեխնիկապես համարժեք) արտադրության ՔՍԳ, խումբ 1,2,3,4	հատ	1	49,39	49,39
21	Արտահոսքի Պաշտպանման Ավտոմատ Անջատիչ (ԱՊԱԱ) ВД1 DX³-ID 2P, AC63A, 30mA Եվրոպական ստանդարտի, բրենդային (Legrand, ABB, Gewiss կամ այլ տեխնիկապես համարժեք) արտադրության ՔՍԳ, խումբ 1, 2, 3 և 4	հատ	2	21,51	43,03
22	Արտահոսքի Պաշտպանման Ավտոմատ Անջատիչ (ԱՊԱԱ) АВДТ DX³ 6000 1P+N, C32A, 30mA Եվրոպական ստանդարտի, բրենդային (Legrand, ABB, Gewiss կամ այլ տեխնիկապես համարժեք) արտադրության, ՔՍԳ, խումբ 5	հատ	1	17,23	17,23
23	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ, DX³-E 6000 1P, C63A Եվրոպական ստանդարտի, բրենդային արտադրության ՔՍԳ, խումբ 4	հատ	1	5,56	5,56
24	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ DX³ 10000 1P, B6A	հատ	2	12,57	25,14

	տեխնիկապես համարժեք) արտադրության: Խումբ 2, 3 (անվտանգության համակարգ, լուսատուներ)				
25	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ DX³-E 6000 1P, C50A, 6kA Եվրոպական ստանդարտի, բրենդային (Legrand, ABB, Gewiss կամ այլ տեխնիկապես համարժեք) արտադրության: ՔՍԳ, խումբ 1	հատ	1	5,56	5,56
26	Էլեկտրական շղթայի ավտոմատ անջատիչ DX³-E 6000 1P, C32A, 6kA Եվրոպական ստանդարտի, բրենդային (Legrand, ABB, Gewiss կամ այլ տեխնիկապես համարժեք) արտադրության: ՔՍԳ, խումբ 5 (օդորակիչներ, օդամուղ)	հատ	1	4,32	4,32
27	Խրամուղու քանդում և հետլիցք հողանցման կառուցման (տոփանումով) համար	մ³	9	2,32	20,84
28	L50x5 մմ, L=2,5 մ, պողպատե անկյունակների ուղղաձիգ տեղադրում հողի մեջ, հողանցման համար	հատ	8	5,02	40,17
29	Պողպատե շերտաձող —50x4, հողանցման համար	գմ	0,5	1,12	0,56
30	Պողպատե շերտաձող —40x4, հողանցման համար՝ խրամուղում և էլ. վահանի մեջ/մոտ	գմ	25	0,78	19,56
31	Հողանցման ալյումինե հաղորդալարի անցկացում, 1x50մմ² հատվածքով	գմ	68	1,42	96,59
32	Էկզոթերմիկ եռակցում հողանցման համար	կետ	8	0,16	1,28
33	Պոլիէթիլենային խողովակ ∅50 մմ, Հողանցման աղբյուրից մինչև շենք	գմ	7	0,48	3,38
34	ՊՎՔ խողովակի անկյունակ ∅50 մմ Տեղադրվում է նախորդի ծայրերին	հատ	4	0,11	0,44
35	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x8 մմ² 1-ի հարկի վահանից դեպի ՔՍԳ վահանակ	գմ	25	0,45	11,36
36	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x2,5 մմ² Խմբեր՝ 1, 2, 4, 5 և կոնտուրներից վարդակների մեջ մտնողները	գմ	125	0,44	54,68
37	Էլ. հոսանքի պղնձե մալուխ, 3x1,5 մմ² խումբ 3	գմ	110	0,32	34,82
38	Ծալքավոր ճկուն պլաստիկ խողովակ, ∅20 մմ, մալուխների մոնտաժման համար, մոխրագույն	գմ	300	0,31	91,93
39	Գնված լուսատուների տեղադրում	կ-տ	38	1,17	44,44
	4 Անվտանգության համակարգեր				
1	Էլեկտրական բաշխիչ վերադիր վահանակ, տեսակը՝ ԱՊԲ-18 IP31 EKF PROxima, 18 մոդուլի համար, նյութը՝ մետաղ, չափը՝ 390(Բ)x340(L)x120(Խ) մմ	հատ	1	10,10	10,10

	վաճառքային գույնը՝ RAL 7035. Ներկել այն պատի գույնով, որի մեջ տեղադրվելու է: ПУЭ-ի բոլոր նորմատիվ պահանջներին համապատասխան, էլեկտրաանվտանգության բարձր դասի, կոմպլեկտավորված մակնիշավորման պիտակներով: Ավտոմատ անջատիչների տեղադրման միջնապատը ապամոնտաժել և տուփն օգտագործել անվտանգության սարքերի տեղադրման համար				
2	Մայր բլոկ և ղեկավարման թվային վահանակ LCD ստեղնաշարով: Արտադրող՝ Teltek կամ տեխնիկապես համարժեք. մոդել՝ Eclipse-8: 7 գոնու հնարավորությամբ	հատ	1	76,62	76,62
3	Ծխի տվիչ էկրանավորված, բազմակի օգտագործվող, 9-35 Վ, 10-50 C, 1GHz	հատ	4	6,07	24,27
4	Մայր բլոկի վթարային մարտկոց (7 Ա, 12 Վ)	հատ	1	8,77	8,77
5	Շարժման տվիչ՝ 360 աստիճան տեսանելիության դաշտով: Կրկնակի սենսորով Մոդել՝ Pyron-6 կամ տեխնիկապես համարժեք	հատ	2	12,19	24,38
6	Շչակ ներսի 9-15 Վ, 20-30 ՄԱ,105 դ/բ. Մոդել՝ ПКИ-1 "Иволга" կամ տեխնիկապես համարժեք	հատ	1	4,26	4,26
7	Շչակ դրսի. Անընդհատ թարթող լույսով: Տագնապի դեպքում՝ սթրոբ լույսային ազդանշանի միացում: Էլ. հոսանքի անջատման դեպքում՝ տագնապի միացումով: Արտադրող՝ DSC կամ տեխնիկապես համարժե	հատ	1	26,71	26,71
8	Մալուխ	գմ	100	0,23	22,87
9	Կրակմարիչ 1000 գրամ, CO2-ով (ներառյալ կախիչները)	հատ	2	4,41	8,82
10	Տրանսպորտային ծախսեր		1	8,16	8,16

5. Լուսատուներ, անջատիչներ, վարդակներ, ապահովիչներ

1	Առաստաղից կախովի լուսատու: Երկրաչափական ձևի նկարագիրը՝ հատած գունդ: Կոդ՝ 005744, արտիկուլ՝ RF810BK կամ տեխկապես համարժեք. Տրամագիծը՝ 350 մմ: Կորպուսի նյութը՝ մետաղ: Կորպուսի գույնը՝ սև: Կոթառի ստանդարտը՝ E27: Առաստաղին մոնտաժվող բաժակի գույնը՝ սև: Մալուխի գույնը՝ սև: Մոնտաժման բոլոր պիտույքների հետ միասին՝ կոմպլեկտով: Գործարանային արտադրության: Տեսքը և այլ մանրամասները ըստ նախագծի	հատ	8	12,80	102,42
2	Առաստաղից կախովի լուսատու: Երկրաչափական ձևի նկարագիրը՝ կաթիլ Կոդ՝ 000111, արտիկուլ՝ RF813-1BK350 կամ տեխկապես համարժեք Լուսամփոփի տրամագիծը՝ 190 մմ, բարձրությունը՝ 350 մմ: Կորպուսի նյութը՝ մետաղ: Կորպուսի գույնը՝ սև: Կոթառի ստանդարտը՝ E27: Առաստաղին մոնտաժվող բաժակի գույնը՝ սև: Մալուխի գույնը՝ սև: Մոնտաժման բոլոր պիտույքների հետ միասին՝ կոմպլեկտով: Գործարանային արտադրության: Մալուխը երկարացված, առաստաղից կախելու չափը՝ 1.3 մ: Տեսքը և այլ մանրամասները ըստ նախագծի	հատ	1	12,04	12,04
3	Առաստաղի մեջ ներկառուցվող լուսատու: Տրամագիծը՝ 70 մմ: Հոսանքի Լարումը՝ 220 Վ: Սպառվող Հզորությունը՝ 5 Վտ: Գունային ջերմաստիճան՝ 3000 Կ: Գունափոխանցման Գործակից (Ra): >90: Կորպուսի գույնը՝ սպիտակ: Լույսի ցրման անկյունը՝ 160: Երաշխիք՝ 3 Տարի: Տեսքը և այլ մանրամասները ըստ նախագծի	հատ	29	3,27	94,69
4	Լուսադիոդային (LED) լամպ: Արտադրող՝ GAUSS կամ տեխնիկապես համարժեք: Կոթառի ստանդարտը՝ E27: Հզորությունը՝ 22 Վտ: Լուսային Հոսք՝ 1800 Լմ: Երկրաչափական ձև՝ գունդ: Գունային ջերմաստիճան՝ 3000 Կ: Մուտքային լարումը՝ 150-265 Վ: Չափը՝ 125x175 մմ: Աշխատանքային ժամ	հատ	8	2,41	19,32

	35000: Լույսի ցրման անկյունը՝ 240 աստիճան: Պաշտպանվածության կարգը (IP)՝ 20: Երաշխիք՝ 5 տարի: Տեսքը և այլ մանրամասները ըստ նախագծի /22 Վտ բացակայության դեպքում կարող է փոխարինվել 16 Վտ հզորությամբ լամպով/				
5	Լուսադիոդային (LED) լամպ: Արտադրող՝ GAUSS կամ տեխնիկապես համարժեք: Կոթառի ստանդարտը՝ E27: Հզորությունը՝ 10 Վտ: Լուսային հոսք՝ 880 Լմ: Երկրաչափական ձև՝ գունդ: Գունային ջերմաստիճան՝ 3000 Կ: Մնուցման լարումը՝ 180-240 Վ: Չափը՝ 45x85 մմ: Աշխատանքային ժամ՝ 25000: Լույսի ցրման անկյունը՝ 120 աստիճան: Պաշտպանվածության կարգը (IP)՝ 20: Երաշխիք՝ 2 տարի: Տեսքը և այլ մանրամասները ըստ նախագծի	հատ	1	0.95	0.95
6	Տրանսպորտային ծախսեր		1	8.16	8.16
	6 Ջեռուցում				
1	Գործող ջեռուցման մարկոցների/սեկցիաների վերատեղադրում/ձևափոխում, 14 սեկցիա Մեկ սեկցիայի տեխնիկական բնութագիրը՝ նյութը՝ ալյումին, գույնը՝ սպիտակ, չափը՝ 550x80x80 մմ	հատ	4	3.18	12.72
2	Պոլիպրոպիլենե (PPR) խողովակ, DN Ø32 մմ (ներքին չափ)	գմ	12	1.74	20.86
3	Պոլիպրոպիլենե (PPR) խողովակ, DN Ø15 մմ (ներքին չափ)	գմ	36	1.28	45.96
4	Խողովակաձև ջերմամեկուսիչ պատյան (սպունգ) DN Ø32 մմ խողովակի համար	գմ	12	0.19	2.24
5	Խողովակաձև ջերմամեկուսիչ պատյան (սպունգ) DN Ø15 մմ խողովակի համար	գմ	36	0.11	4.03
6	Մեկուսիչ ժապավեն ջերմամեկուսիչ պատյանի կարերը հերմետիզացնելու համար	հատ	1	0.37	0.37
7	Եռաբաշխիկ (PPR) Ø32 մմ-ից ≥15 մմ անցումով	հատ	6	0.15	0.93
8	Եռաբաշխիկ (PPR) Ø15	հատ	4	0.05	0.22
9	Անկյունակ (PPR), առանց պարուրի Ø15 մմ	հատ	30	0.03	1.01
10	Անկյունակ (PPR), պարուրով (մետաղ) Ø15 մմ	հատ	8	0.71	5.71
11	Շրջանցող դետալ (PPR) Ø15 մմ	հատ	1	0.14	0.14
12	Ջեռուցման մարտկոցի ստորին փական	հատ	4	3.17	12.68
13	Ջեռուցման մարտկոցի վերին փական	հատ	4	3.27	13.07
14	Ջեռուցման մարտկոցի օդահեռացման փական /ավտոմատ/	հատ	4	1.62	6.49
15	Ջեռուցման մարտկոցի բարձակներ	հատ	8	0.39	3.11

Ընդամենը	4870.68
Շահույթ 11%	535.77
Ընդամենը	5406.45
ԱԱՀ 20%	1081.29
Ընդամենը	6487.74

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հ/Հ՝ 900242191022
ՀՀ ֆին նախ գործառն վարչ
Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝ Ք. Նիկողոսյան

/ստորագրություն/

Մ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 10
ՀՎՀՀ՝ 06959372
Հ/Հ՝16032022852300
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Մ. Մելքոնյան

/ստորագրություն/

Մ.Տ.

Հավելված թիվ 2
« 01 » հուլիսի 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/12 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

N Ը/Կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Սպիտակ համայնքի կարիքների համար քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման **աշխատանքներ**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.08.2021թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	15.08.2021թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հ/Հ՝ 900242191022
ՀՀ ֆին նախ գործառն վարչ
Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝ Ք. Նիկողոսյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 10
ՀՎՀՀ՝ 06959372
Հ/Հ՝16032022852300
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Մ. Մելքոնյան

/ստորագրություն/

Հավելված N 3
« 01 » հուլիսի 2021թ. կնքված
ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-21/12 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	
			հուլիս օգոստոս	Ընդամենը
1	45451700	Սպիտակ համայնքի կարիքների համար քաղաքացիների սպասարկման գրասենյակի վերակառուցման և վերանորոգման աշխատանքներ	Վճարումները կատարվելու են փաստացի կատարված աշխատանքներին համապատասխան՝ առավելագույնը 30 բանկային օրվա ընթացքում	6 487 740

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սպիտակ համայնք
ք. Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հ/Հ՝ 900242191022
ՀՀ ֆին նախ գործառն վարչ
Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար՝ Ք. Նիկողոսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԷՄ-ԷՅ» ՍՊԸ
ք. Սպիտակ, Շահումյան 10
ՀՎՀՀ՝ 06959372
Հ/Հ՝16032022852300
«ՎՏԲ Հայաստան բանկ» ՓԲԸ
Տնօրեն՝ Մ. Մելքոնյան

/ստորագրություն/
Կ.Տ